ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԳԻ

ԸՆՏԱՆԻՔԻ ԹԵՄԱՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Իր 75-ամյա գոյության ընթացքում «էջմիածին» ամսագիրը բազում հարցերի է անդրադարձել, գիտական լուսաբանումներ տվել արդիական հնչեղություն ունեցող խնդիրների, սակայն նյութի ընդհանրական կարեւորության դիտանկյունից առանձնանում է ընտանիքի թեման։ Հայ ժողովուրդը վաղուց է ընտանիքն ընդունել որպես հզոր պետության հիմնասյուն ու իր կործանվող պետականությունների շրջապտույտում շատ անգամ հայրենի տան եւ ընտանիքի ընկալումով է դիմակայել փորձություններին։ «էջմիածին» ամսագրում տպված նյութերը հենց այդպիսի ընկալման հետաքրքիր վերլուծություններ են։

Սակայն մինչ այդ վերլուծություններին անդրադառնալը նշենք, որ ընտանիքի ընկալումը քրիստոնեական վարդապետության հիմքում է՝ Սուրբ Ընտանիքի օրինակով, իսկ ընտանիքի գաղափարը՝ որպես այդպիսին, մշտապես եղել է Հայոց կաթողիկոսների ուշադրության կենտրոնում, հիշատակվել նրանց օրհնության գրերում, տոնի կամ ցավակցության առիթով հնչած խոսքում, բարեպաշտ հավատացյալներին դիմելու ձեւերում։ Հայոց Եկեղեցու՝ ընտանիքի հանդեպ հոգածության այդպիսի վկայությունները բազմաթիվ են «էջմիածնի» էջերում[1]։

Ընտանիքի գաղափարը մեծապես շեշտվում է կանանց ուղղված հայրապետական շնորհավորական ուղերձներում, կնոջ առաքելությունը՝ գնահատվում որպես ընտանիքին հավատարմորեն ծառայելու խորհուրդ։ Ինչպես, օրինակ՝ «Աղոթում ենք առ Ամենակալն Աստված, որ տերունաշնորհ երջանկությունը միշտ ապրի մեր մայրերի, քույրերի ու դուստրերի սրտերում, եւ նրանք շարունակեն ազնիվ ու նվիրյալ ընթացքով ծառայել իրենց ընտանիքների բարօրության եւ Հայրենիքի զարթոնքին ու

---

[1] *Տե՛ս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը «Ընտանիք, հասարակություն եւ Եկեղեցի» համաժողովին (12 սեպտեմբերի, 2014 թ.), «էջմիածին», 2014, Թ., էջ 7–8։*

առաջընթացին»[2] կամ՝ «Ամենօրհնյալ Սուրբ Աստվածածինը առ Աստված իր մեծ հավատքով կատարյալ օրինակ է կանանց համար՝ արժեւորելու իրենց վեհ առաքելությունը ազգային եւ ընտանեկան կյանքում»[3]։

Ամեն տարի Ավետման տոնը մի հատուկ առիթ է դառնում մոր դերի կարեւորմամբ ընդգծելու ընտանիքի ամրության գաղափարը։ Աստվածածնի օրինակով է կնոջը հորդորվում իր դերի կարեւորության գիտակցումը. «Աստվածածնի նման խոնարհությամբ, առ Աստված հավատարմությամբ կանայք պիտի արդյունավորեն իրենց առաքելությունը՝ նոր սերունդ դաստիարակելու, ընտանեկան օրհնյալ հարկը սիրով եւ հոգատարությամբ զորացնելու, նաեւ ազգային եկեղեցական մեր կյանքում իրենց կոչումը բարի գործունեությամբ արդյունավորելու»[4]։

Նշենք, որ ընտանիքի միասնականության, ինչպես նաեւ փոխօգնության գաղափարին հանդիպում ենք ամսագրի առաջին իսկ հրապարակումներում։ 1945 թ. Գեւորգ արք. Չորեքչյանը, «Էջմիածնի» Ա.–Բ. միասնական համարում խոսելով հայ ժողովրդի ընթացքի մասին Երկրորդ աշխարհամարտի տարիներին, դրվատանքի խոսքով է հիշում թիկունքում եղածներին. «Հայ ժողովուրդը ոչ միայն զինական աջակցություն է ցույց տվել Հայրենական մեծ պատերազմին, այլեւ թիկունքում տարել է կարեւոր աշխատանքներ։ Թիկունքում հայ կինը, հայ ծերունին եւ հայ պատանին փոխարինել են երիտասարդ մարտիկներին ե՛ւ դաշտի աշխատանքներում, ե՛ւ գործարաններում, ե՛ւ տանը։ Թիկունքում հայ մարդը հոգացողություն է ունեցել նաեւ մարտիկների ընտանիքների վերաբերմամբ՝ խնամելով նրանց կանանց ու երեխաներին, մատակարարել է դեղորայք վիրավորներին, նվերներ է ուղարկել մարտիկներին՝ որպես նշանակ իր տածած սիրո»[5]։

Ընտանիքի թեման արտացոլվել է նաեւ ամսագրի կրոնագիտական եւ պատմաբանասիրական բաժինների նյութերում։ Փիլիսոփայության, հոգեբանության, պատմության եւ այլ գիտակարգերի դիտանկյունից

---

[2] *Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով, «Էջմիածին», 2007, Բ.–Գ., էջ 62։*

[3] *Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով, «Էջմիածին», 2011, Դ., էջ 3։*

[4] *Անդ։*

[5] *Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության Գեւորգ արք. Չորեքչյան, Հայ եկեղեցու եւ հայ ժողովրդի բռնած դիրքը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, «Էջմիածին», 1945, Բ., էջ 4։*

վերլուծվել են հետազոտություններ եւ գեղարվեստական երկեր, որոնք առնչվում են ընտանեկան հարաբերություններին, փորձում լուծել համամարդկային եւ համազգային խնդիրներ։ Բերենք որոշ օրինակներ։ Այսպես, 1976 թ. «Էջմիածնի» Է. համարում Արթուր Հատիտյանի խմբագրությամբ լույս է տեսնում Մկրտիչ Խրիմյանի «Դրախտի ընտանիք» երկի (1876 թ., Կոստանդնուպոլիս) հրատարակության 100-ամյակին նվիրված մի հոդված, որի հեղինակն իրավամբ կարեւորել եւ ընդգծել է գեղագետ կաթողիկոսի գրվածքում արտացոլված ընտանիք—հայրենիք շաղկապվածությունն ու դրանից բխող հետեւանքները։ Մեջբերենք. «Մեծ մտածողը (Մկրտիչ Խրիմյանը.— Լ. Վ.) «դրախտի ընտանիք» էր երազում, որից կախված էր իր համոզմամբ հայ ժողովրդի առաջադիմությունն ու հուսալի ապագան»[6]։ Հոդվածագիրը նշում է, որ Պոլսո պատրիարքության աթոռից հրաժարվելուց հետո «Վասպուրականի արծիվը», որ ավելի մեծ ջանասիրությամբ սկսեց զբաղվել գրական գործունեությամբ, ուշադրությունն ուղղեց հատկապես հայ ընտանիքներին, նրանցում եղած խնդիրներին ու արատավոր երեւույթներին, որոնց լավատեղյակ էր եկեղեցական դատական արձանագրություններից։ Հոդվածի հեղինակի գնահատմամբ՝ «Խրիմյանը զարմանալի առաջադիմական մտքեր է հայտնում ընտանեկան կյանքի, ամուսնության, ամուսինների փոխհարաբերությունների, կնոջ իրավունքների եւ շատ այլ կարեւոր հարցերի վերաբերյալ»[7]։ Առաջադիմության եւ քաղաքակրթության ձգտողներին նա խորհուրդ էր տալիս զգույշ գործել, ցույց էր տալիս հայ կյանքում բույն դրած արատները, որ պետք է արմատախիլ արվեն, մատնացույց անում հայ ընտանիքում եղած առողջն ու բանականը։ Հոդվածագիրը փաստում է նաեւ, որ Խրիմյան Հայրիկն իր երկասիրության մեջ պաշտպան է կանգնում հայ կնոջ ազատությանը՝ այր մարդու հետ հավասար իրավունքներ պահանջելով[8]։

Նշելով երկի կարեւոր հայեցակետերը՝ Հ. Ներսեսյան-Փանիկյանը նաեւ անդրադառնում է երկի կառուցվածքին՝ առանձին-առանձին վերլուծելով «Դրախտի ընտանիք» աշխատության բոլոր 18 գլուխները, որոնցից «Նահապետական տուն եւ ընտանիք» գլուխը համարում է

---

[6] ՀԵՂԻՆԵ ՆԵՐՍԵՍՅԱՆ-ՓԱՆԻԿՅԱՆ, *Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք»-ը (հրատարակության 100-ամյակի առիթով), «Էջմիածին», 1976, Է., էջ 27։*

[7] *Անդ։*

[8] *Անդ։*

հայրենասիրական կոչ՝ ուղղված հայ հասարակությանը։ Նա շատ բարձր է գնահատում հայ ընտանիքի արատները վերացնելուն, այն առավել կատարյալ դարձնելուն նվիրված այս աշխատությունը, շեշտում նրա չկորսված արդիական հնչեղությունը։

Տարիներ անց՝ 2007 թ., եւս մեկ անդրադարձ ենք գտնում այս երկին «Էջմիածին»-ում։ Ամսագրի Ժ. համարում (գլխ. խմբագիր՝ Վ. Դեւրիկյան) լույս է տեսնում Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք»-ից մի հատված՝ «Հարսանիք եւ խորհուրդ պսակին» վերնագրով։ Այն նախ՝ ընթերցողին մեկնաբանում է քրիստոնեական պսակադրության խորհուրդը, որն աստվածային դաշնադրությամբ միացնում է թագավոր փեսային եւ թագուհի հարսին, հետո՝ հորդորում զուսպ եւ համեստ նշել հարսանեկան տոնակատարությունը։ Հետաքրքիր է, որ այդ խորհուրդները ԺԹ. դարից՝ 1876 թ.-ից մինչ օրս չեն կորցրել իրենց արդիականությունը։ Վկայակոչելով Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»՝ Խրիմյան Հայրիկը վստահորեն փաստում է ամուսնական տոնախմբության, իր խոսքով՝ թմբուկ զարկելու անհրաժեշտությունը։ Դրանով պետք երեւա, որ այդ ամուսնությունն ինչ-որ ծածուկ մի բան չէ, այլ Աստծու օրհնությամբ է կայացել. «...հարսանիքը խաւարին տակ ծածկուած գաղտնի չարութիւն չէ. այլ Եկեղեցւոյն առաջ, լուսոյն առաջ, հրապարակի մէջ անպատրուակ ճշմարտութիւն է»[9]։ Այնուհետեւ Մ. Խրիմյանն զգուշացնում է չափազանց ուրախությունների, ամուսնական զույգին աղքատության գիրկը նետող կամ պանդխտության մղող չափից դուրս ծախսերի եւ այլ արատավոր երեւույթների մասին[10]։

Հայ Եկեղեցու մեկ այլ գործչի՝ Խորեն Աշըգյանի՝ ընտանիքին վերաբերող գաղափարներին է նվիրված փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ռիմա Միրումյանի «Ընտանիքը Խորեն Աշըգյանի քաղաքական տեսության մեջ» հոդվածը՝ լույս տեսած 2013 թ.[11]։

Խորեն Աշըգյանը Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր 1888—1894 թթ.[12]։ Հոդվածագիրը դիտարկում է այս գործչի՝ ընտանիքին նվիրված մտքերը՝

---

[9] Մկրտիչ Ա. Խրիմեան, *Հարսանիք եւ խորհուրդ պսակին*, «Էջմիածին», 2007, Ժ., էջ 92։

[10] *Տե՛ս անդ։*

[11] *Տե՛ս* Ռ. Միրումեան, *Ընտանիքը Խորեն Աշըգյանի քաղաքական տեսության մեջ*, «Էջմիածին», Զ., էջ 56—66։

[12] *1885 թ. Խորեն արք. Աշըգյանը հեղինակել է «Համառօտ փիլիսոփայութիւն»-ը, որտեղ փիլիսոփայության գլխավոր խնդիրը համարել է Աստծու գոյության հիմնավորումը հոգու էության հետազոտման միջոցով։ 1871 թ. լույս է տեսել նրա «Համառօտ տրամաբանութիւն»-ը։*

նկատի ունենալով այն փաստը, որ ընտանիքը եւ ընտանեկան հարաբերությունների հիմնահարցն առանցքային էին հայ ազգի քաղաքական մտքի մեջ սկսած ԺԹ. դարից։ Խորեն Աշըգյանը երկու՝ պահպանողական եւ ազատական հոսանքներից առաջինին էր պատկանում։ Նա համոզված էր, որ «Ավանդույթը շատ ավելի կենսունակ է, քան որեւէ ռացիոնալ սկզբունք»։ Ի տարբերություն ազատականների, որոնք հասարակական առաջադիմությունը պայմանավորում էին նոր ժամանակի եւրոպական գաղափարներն ազգային-մշակութային ավանդույթին պատվաստելով՝ Աշըգյանն ավանդականը համարում էր ազգային ինքնության պահպանման միջոց։ Այս առումով խիստ կարեւորվում էր նաեւ ընտանիքի դերը, որը՝ «որպես ընկերական աշխարհի շենքի» պատվանդան, նաեւ ազգի եւ մարդկության գոյատեւման եւ կատարելագործման հիմքն է[13]։

Վերլուծելով Խ. Աշըգյանի «Առտնին ընկերութիւն», «Կին քրիստոնեայ», «Ընտանիք» եւ այլ հոդվածներ՝ Ռ. Միրումյանը եզրակացնում է, որ Աշըգյանն ընտանիքը համարում է ազգի գոյատեւման եւ հզորության հիմքն ու նրա հոգեբարոյական նկարագրի չափորոշիչը։

Մերժելով իր ժամանակաշրջանում լայն տարածում գտած «ազատ բարոյական» հաստատող եւ դարվինականություն քարոզող տեսությունները՝ Խ. Աշըգյանը աստվածային օրենքներն է համարում ընտանիքի կենսագործունեության հիմքը։

Հեղինակը նկատում է, որ ըստ Խ. Աշըգյանի տեսության՝ ընտանեկան հարաբերությունները (տղամարդ—կին, ծնողներ—երեխաներ) պետք է հիմնվեն բարոյական օրենքից բխող սկզբունքների վրա (փոխադարձ սեր եւ հավատարմություն, անձնվիրություն եւ փոխօգնություն)։ Ընտանիքի բարոյական խորհրդի հետ շաղկապվում են մի շարք փոխկապակցված խնդիրներ՝ եկեղեցական ամուսնության հաստատության պահպանումը, բազմակնության եւ ամուսնալուծության ավանդույթի հերքումը, ազատ բարքերի դատապարտումը եւ այլն[14]։

Հոդվածը հարուստ նյութ է տալիս ոչ միայն Խորեն Աշըգյանի՝ ընտանիքի ըմբռնման վերաբերյալ, այլ նաեւ հետաքրքիր բնագրային

Այս երկում հեղինակը քննել է մարդու տրամաբանական ունակությունները, որոնք համարել է աստվածային շնորհ եւ նոր ճշմարտությունների ձեռքբերման եւ հիմնավորման գիտություն։ 1889 թ. հիմնել է Արմաշի դպրեվանքը (ըստ Վիքիպեդիայի)։

[13] Տե՛ս Ռ. Միրումյան, Ընտանիքը Խորեն Աշըգյանի քաղաքական տեսության մեջ, «Էջմիածին», 2013, Զ., էջ 56—66։

[14] Տե՛ս անդ, էջ 59—60։

մեջբերումներով ընթերցողին մղում է քննվող երկերի ամբողջական ծանոթացմանը կամ վերարժեւորմանը։

Հետաքրքիր է, որ հայ տեսաբանների այս նյութերը համախոհ երկխոսության մեջ են օտարազգի հեղինակների՝ նույն թեմայով մտորումների հետ։ Այս առումով պետք է հիշատակենք «էջմիածնի» 2018 թ. Դ. եւ 2019 թ. է. համարներում լույս տեսած երկու հոդվածները։ Դրանցից առաջինն Իվան Իլյինի «Ընտանիքի մասին»[15], երկրորդը՝ Իոհան ավագերեց Մեյենդորֆի «Ամուսնությունն ուղղափառության մեջ»[16] կրոնագիտական նյութերն են։

Ռուս վտարանդի փիլիսոփա, աստվածաբան եւ իրավագետ Իվան Իլյինի (1883–1954) «Հոգեւոր վերանորոգման ուղին» աշխատությունից է նրա վերոնշյալ շարադրանքը։ Բաղկացած է երեք մասից՝ «Ընտանիքի նշանակությունը», «Ընտանիքի հոգեւոր առողջության մասին» եւ «Դաստիարակության հիմնական խնդիրները»։ Իլյինը վստահ է, որ «Երջանիկ եւ սիրող ընտանիքում մարդը դաստիարակվում է հոգեպես անվնաս, կարողունակ է լինում սիրելու, կառուցելու եւ դաստիարակելու... Որքան սիրառատ եւ երջանիկ է եղել ծնողների ընտանիքը, այնքան շատ են այդ հատկանիշներն ու երեւույթները պահպանվում մարդու մեջ, այնքան շատ է նա այդ ամենը տեղափոխում իր կյանք, իսկ դա նշանակում է, որքան անվնաս մնա հոգեւորը, այնքան բնական, հարուստ եւ ստեղծագործական արդյունավետությամբ կծաղկի նրա անհատականությունը հարազատ ժողովրդի ծոցում»[17]։ Դաստիարակության մասին խոսելիս Իլյինը խորհուրդ է տալիս արթնացնել մանկան հոգին, ինչպես նաեւ ուժի աղբյուրը նրա հոգում, որով նա կկարողանա հաղթահարել իրեն սպասող դժվարությունները[18]։ Իլյինի ամենակարեւոր եզրահանգումն այն է, որ ընտանիքը հայրենիքի հիմքն է, ինչպես հիմքն է մարդկության հոգեկանության, հետեւաբար՝ ողջ հոգեւոր մշակույթի[19]։

Ի. դարի աստվածաբան եւ բյուզանդագետ Իոհան ավագերեց Մեյենդորֆի աշխատության մեջ խոսվում է ամուսնության խորհրդի,

---

[15] Ի. Իլյին, *Ընտանիքի մասին, թարգմ.՝ Ազնիվ Հակոբյան, «էջմիածին», 2018, Դ., էջ 21–45։*

[16] Իոհան Ավագերեց Մեյենդորֆ, *Ամուսնութիւնն ուղղափառութեան մէջ, «էջմիածին», թարգմ.՝ Տ. Անդրեաս աբգ. Եզեկյան, Կ. Եղիազարյան, 2019, է., էջ 28–45։*

[17] Ի. Իլյին, *Ընտանիքի մասին, «էջմիածին», 2018, Դ., էջ 27։*

[18] *Անդ, էջ 35։*

[19] *Անդ, էջ 45։*

ամուսնության ու հաղորդության եւ ամուսնական կապի անքակտելիության ուղղափառ ըմբռնման մասին։ Ամուսնության աստվածաբանական մեկնությունն այն դարձնում է արժեքավոր, երկրային իմաստը փոխարկում երկնային, սրբազան, հավերժական իմաստի, հետեւաբար նպաստում ընտանեկան միության առավել ամրացմանը։

2019 թ. վերջին՝ ԺԲ. համարում լույս է տեսել Տ. Իսահակ վրդ. Պողոսյանի «Ընտանիքի աստիճանակարգությունը» հոդվածը, որտեղ Սուրբ Գրքի եւ Եկեղեցու հայրերի հարաստությամբ մեկնաբանված են ընտանիքի ներդաշնակ գոյակցության պայմաններն ինքն իր ներսում եւ հասարակության մեջ[20]։

Ի վերջո, ամսագրի պատմաբանասիրական անդրադարձներն ընտանիքի թեմային կարծես գալիս են հաստատելու վերը նշված ողջ տեսականը, ամրապնդելու դրանք կյանքից վերցված փաստերով։ Այսպես, 2010 թ. լույս տեսած մի հոդվածում՝ «Ներընտանեկան հարաբերությունների նկարագիրը Պերճ Պռոշյանի երկերում», հեղինակը՝ Լ. Քեւնակսզյանը, նշում է. «Հայ ազգագրությունը ընտանիքի եւ ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ բավականին հարուստ աղբյուրագիտական նյութ եւ գիտական գրականություն ունի։ Այս շարքում ուրույն տեղ է գրավում գեղարվեստական գրականությունը, որը, ցավոք, դեռ պատշաճ ուշադրության չի արժանացել»[21]։ Այս առումով նա առանձնացնում է Պերճ Պռոշյանի ստեղծագործությունը, որում կարեւորում է նրա՝ ազգային ծեսերի, սովորույթների ու ավանդությունների վերհանումը, դրանք որպես միջոց ծառայեցնելն ազգի իրական բնույթն անեղծ պահելուն։ Ուսումնասիրելով Պռոշյանի «Սոս եւ Վարդիթեր», «Շահեն», «Հացի խնդիր», «Բղդե», «Կռվածաղիկ», «Ցեցեր» վեպերը՝ հեղինակը Պերճ Պռոշյանին բնորոշում է որպես հայ նահապետական ընտանիքի տարեգիր, որը լավ գիտի մեծ տան՝ գերդաստանի խնդիրները, հայ կյանքը։

Օգտվելով, իր իսկ բնորոշմամբ, հայ մարդու կյանքի, ընտանիքի, սովորույթի, բառ ու բանի այն հարուստ շտեմարանից, որ իրենից ներկայացնում է Պռոշյանի ստեղծագործությունը՝ նա հոդվածի շրջանակներում փորձում է ներկայացնել հայոց ներընտանեկան հարաբերությունների

---

[20] *Տե՛ս* Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՈՂՈՍՅԱՆ, *Ընտանիքի աստիճանակարգությունը, «Էջմիածին», ԺԲ., 2019, էջ 54–76։*

[21] Լ. ՔԵՒՆԱԿՍԶՅԱՆ, *Ներընտանեկան հարաբերությունների նկարագիրը Պերճ Պռոշյանի երկերում, «Էջմիածին», 2010, է., էջ 31։*

համակարգը։ Մասնավորապես՝ նկատում է, որ ազգագրական ուսումնասիրություններում հայ ընտանիքը դիտարկվում է երկու ձևով՝ մեծ նահապետական ընտանիքի, որը նաև «գերդաստան» է կոչվում, եւ նրանից տարանջատված անհատական փոքր ընտանիքի։ Ըստ նրա՝ Պերճ Պռոշյանն առավել մոտիկից էր տեսնում իրողությունը եւ ներսից գիտեր հայ ընտանիքի խնդիրները։

Բառային քննության ենթարկելով գրողի ստեղծագործությունը՝ հոդվածի հեղինակը նկատում է, որ նա «գերդաստան» բառը հաճախ է փոխարինում «Աբրահամի օջախ» արտահայտությամբ։ Սա հենց այն բազմանդամ ընտանիքն էր՝ երբեմն նույնիսկ 70–80 հոգուց բաղկացած, որի ղեկավարը ծերունի հայր-նահապետն էր, եւ որտեղ կյանքն ընթանում էր մի յուրօրինակ ներդաշնակ համագոյակցությամբ։ Հայր-նահապետին սատարում էր տանտիկինը կամ մեծ նանը։ Պռոշյանի վեպերը երեւան են բերում ընտանիքի այն պատկերը, որտեղ յուրաքանչյուրն իր գործառույթն ու իր տեղի ճիշտ գիտակցումն ունի։ Որդիները ենթարկվում են հորը, հարսներն ու դուստրերը՝ սկեսուրին՝ մեծ նանին, հարսները, իրենց հերթին, ունեն ավագության գիտակցում, եւ մեծ հարսն ավելի բարձր դիրք ունի, կա հարսի չխոսկանության սովորույթ՝ ի նշան խոնարհության եւ այլն։ Եւ այդուհանդերձ, ինչպես նկատում է հոդվածագիրը, սա ընտանիքի քայքայվող տեսակն է, քանի որ «կապիտալիստական հարաբերությունների առաջացումը գյուղում, փոխանակության եւ փողի իշխանության աճը հեղաշրջում էր առաջ բերում մարդկանց հոգիներում, աստիճանաբար դուրս վտարում նահապետական կյանքի փիլիսոփայությունը»[22]։ Հոդվածագրի եզրահանգումն այն է, որ Պերճ Պռոշյանի վեպերը հարուստ աղբյուր են ԺԹ. դարի եւ Ի. դարի սկզբի հայ ընտանիքի հարաբերությունների եւ կենցաղավարման մասին լավագույնս պատկերացում կազմելու համար։

Հետաքրքիր է, որ հաջորդ հոդվածագրի՝ Վաչագան Գրիգորյանի՝ ընտանիքի վերաբերյալ վերլուծությունները կարծես նույն ասելիքի շարունակությունը լինեն սոսկ մի քանի տասնամյակ հեռավորությամբ՝ ցույց տալով արդեն Ի. դարի երկրորդ կեսի պատկերը։ Այս անգամ ընտանիքի հայեցակարգը դիտարկված է «Հայ ավանդական ընտանիքը Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործության մեջ» հոդվածում[23], որ-

[22] Անդ, էջ 34։

[23] Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Հայ ավանդական ընտանիքը Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործության մեջ, «Էջմիածին», 2019, Ը., էջ 84–101։

տեղ գրողի հայտնի եւ լայն հանրությանն անհայտ երկերի («Տախը») վերլուծությամբ՝ հայ ավանդական ընտանիքի եւ խելահեղորեն փոփոխվող աշխարհի զուգահեռներն են՝ ազգայինն ու ավանդականը չկորցնելու անհրաժեշտության գիտակցումով։ Արեւմուտքում մարդն ավելի ու ավելի շատ է մենության անդունդը նետվում, քանի որ թուլացած, գրեթե կորսված է ընտանիքի գործոնը։ Ըստ հոդվածագրի՝ ի հակադրություն սրան՝ «Մաթեւոսյանի հերոսները հայ ավանդական ընտանիքում ձեւավորված հարաբերությունները գուրգուրանքով պաշտպանելու կողմնակիցն են, իսկ երբ տեսնում են, որ այդ կապերը նոր ժամանակների ազդեցության տակ կարող են կորցնել իրենց նախնական, բնական արժեքն ու որակները, ցավ են ապրում, քանի որ այլ՝ նպատակահարմար ձեւեր չեն գտնում՝ իրենց մտահոգությունները փարատելու»[24]։

Վ. Գրիգորյանն անդրադառնում է նաեւ Մաթեւոսյանի ստեղծած կին հերոսներին՝ Աղունին, Աբելի պառավին, Ծովինար խաթունին («Տախը»), Հակոբի Արուսին՝ նրանց համար խիստ բնութագրական համարելով մոր էությունը։ Ամփոփիչ եզրահանգումն այն է, որ մաթեւոսյանական հայ ավանդական ընտանիքում հավասար տեղ է հատկացված թե՛ տղամարդուն, թե՛ կնոջը։ Նրանք հավասարապես կրում են կյանքի դժվարությունները առանց կյանքից ինչ-որ բան պահանջելու, պարզապես ապրում են իրենց կյանքը միմյանց հանդեպ պարտավորվածության զգացումով։ Նրանցից յուրաքանչյուրն ունի միմյանց կարեւորության գիտակցումն ու համոզված է, որ մարդը կարող է երջանիկ լինել միայն իր ընտանիքում. այս միտքն է վերլուծողը բխեցնում Հրանտ Մաթեւոսյանի երկերից[25]։

Այսպիսով՝ մենք փորձեցինք Հայոց կաթողիկոսների խոսքերից արված քաղաբերումների, ինչպես նաեւ ընտանիքի վերաբերյալ «Էջմիածնի» տարբեր տարիների հրապարակումների միջոցով ցույց տալ ընտանիքի ամբողջական հայեցակարգը Հայ Եկեղեցու պաշտոնական ամսագրի էջերում։ Ընդհանրությունը, որ կա այս նյութի շուրջ բոլոր անդրադարձներում, հաստատում է մեր ազգային ինքնության ամենակայուն հատկանիշը՝ ընտանեսիրությունը, եւ ամուր պետության հայեցակարգում առաջնային համարում առողջ, ներդաշնակ եւ սիրով ստեղծված ընտանիքի գաղափարը։

---

[24] *Անդ, էջ 98։*

[25] *Տե՛ս անդ, էջ 100։*

РЕЗЮМЕ

В статье проанализированы материалы о семье, вышедшие в свет начиная с первого номера журнала «Эчмиадзин» (1945 г.). В первую очередь представлены восприятие и позиция глав Армянской Церкви, отраженные в патриарших энцикликах и грамотах благословения, а также в изречениях, высказанных по разным поводам. Затем были изучены статьи из религиозных и историографических отделов журнала, которые касаются семьи. Во всех указанных местах подчеркивается идея прочности семьи и гармоничного быта, что, соответственно, является прочным фундаментом для государства.

SUMMARY

The article analyzes the materials related to the family published in «Etchmiadzin» magazine since its first issue (1945). First of all, the perception of the leaders of the Armenian Church is presented, which is reflected in their letters of blessing, encyclicals, and words spoken on various occasions. The articles in the religious and historical sections of the magazine were then examined. All of the above emphasizes the idea of family strength, harmonious way of living and, accordingly, the idea of family as a solid foundation for the state.